331.88(47.925)
Հ-89

ԿԱՇՎԱՐԴԻ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՅԵՎ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ 1929 ԹՎԻ ՀԱՎԱՔԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

ԿԵՆՔՎԱԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՇԵԳՈՐԾՆԵՐԻ ԱՐՀՄԻՈՒՅԱՆ Կ-ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԿԱՇՎԱՐԴԻ ՄԻՋԵՎ

Հ. Ժ. Տ. Գ. Խ.

ԿԱՇՎԱՐԴ

Ցերեվան

33/80(4)
Կ-89
ստաց 5 JAN 2
3
2777
1006
2992

ԿԱՇՎԱՐԴԻ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՅԵՎ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ 1929 ԹՎԻ ՀԱՎԱՔԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

ԿՆՔՎԱԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՇԵԳՈՐԾՆԵՐԻ ԱՐՇՄԻՈՒՅԱՆ Կ-ՎԱՐՁՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԿԱՇՎԱՐԴԻ ՄԻՋԵՎ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ա. ՄԵԼՔՈՒՄՅԱՆԻ
Երևան
Публичная Библиотека

25 FEB 2013
24822

ՀԱՅՊՈՒԼԻԳ. ԱՖԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ

Գնա. 2934 Գրառեպլխվար 2025 (բ)
Տիրաժ 200

ՀԱՎԱՔԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Ընդհանուր մասը

§ 1·

Սույն հավաքական պայմանագիրը կնքվում է մի կողմից ՀՍԽՀ Կաշեղործ բանվորների Արհմիության Կենտր· Վարչության, որը հետագայում կոչվելու է (Արհմիություն) հանձինս ընկ· Հ· Աբրահամյանի և մյուս կողմից Գաշվարդի, որը հետագայում կոչվելու է (ձեռնարկություն) հանձինս ընկ· Բ· Գրիգորյանի միջև։

§ 2·

Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում սկսած 1929 թ· հունվարի

1-ից և գործում է մեկ տարի ժամանակով մինչև 1930 թ. հունվարի 1-ը:

§ 3.

Պայմանագիրը տարածվում է 150 բանվոր-ծառայողների վրա ինչպես ներկայումս աշխատող նույնպես սույն պայմանագրի գործողության ընթացքում նոր ընդունվող բոլոր բանվոր-ծառայողների վրա:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ՝ Սույն պայմանագիրը չի տարածվում վարչական կազմի պատասխանող անձանց վրա, վորոնք ունեն իրավունք բանվոր-ծառայող ընդունելու և կամ աշխատում են առանձին կնքված պայմանագրով: Վարչությունը պարտավոր է ներկայացնել Միության այն բոլոր պայմանագրերի պատճենները վորպիսիք կնքվում են մասնագետների հետ:

§ 4.

Պայմանագրի ժամանակամիջոցում

պայմանագիրը կնքող կողմերի փոխադարձ համաձայնությամբ նրա առանձին մասերը և կետերը կարող են փոփոխության յենթարկվել: Փոփոխումները ուժի մեջ են մտնում պայմանագրվող կողմերի ստորագրման ժամանակից սկսած:

§ 5.

Յեթե մինչև սույն պայմանագրի գործողության ժամկետը լրանալը 15 որ առաջ կողմերից վորևե մեկը մյուս կողմին ցանկություն չի հայտնում վերանայել պայմանագիրը (կամ հրաժարվում է նրա յերկարացումից) սույն պայմանագիրը ամբողջովին գործողության մեջ է մտնում (մինչև նոր պայմանագրի կնքումը):

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ՝ Պայմանագրի գործողության ընթացքում չի կարելի մացնել նոր կետեր, վորոնք վատթարացնում են պայմանագիրը:

§ 6.

Սույն պայմանագրի կիրառման հրա-
կողությունը և նրա գործադրման հո-
գի վրա ծագած բոլոր տարաձայնու-
թյունները ու վեճերը լուծվում են
ԳԿՀ-ի միջոցով, վորը գործում է
ԳԿՀ-ի վերաբերյալ կանոնադրության
հիման վրա:

§ 7.

Կաշվարդը պարտավորվում է գոր-
ծարաններից և հիմնարկություններից
աշխատանք չտալ ինչպես իր բանվոր-
ծառայողներին, նույնպես կողմնակի
անձանց դրսում կատարելու համար:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ. ՀԵՌԱՑՈՒՄ ՑԵՎ ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

§ 8.

Հիմնարկության վարչությունը
պարտավոր է հավասար վորակի դեպ-

քում առաջին հերթին աշխատանքի ըն-
դունել Արհմիության անդամներին:
Յերբ Միության անդամների մեջ հա-
մապատասխան վորակի աշխատողները
բացակայում են, այդ դեպքում կարելի
է ընդունել վոչ Միության անդամներ
(նախապես Միության համաձայնու-
թյունը ստանալուց հետո):

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ՝ Հիմնարկության Վար-
չությունը պարտավորվում է բանվորներին և
ծառայողներին ընդունելությունը կատարել
բացառապես Աշխորայի միջոցով, բացառու-
թյամբ բարձր վորակի պահանջող աշխատա-
կիցների, յեթե համապատասխան վորակ բոր-
սայում բացակայում է, կաշվարդը կարող է
ընդունել և վոչ ցուցակագրվածներին Միու-
թյան նախնական համաձայնության:

§ 9.

Ամեն մի նոր բացվող տեղի մասին
Կաշվարդի վարչությունը պետք է ան-

միջոցներ հայտնի Տեղկոմին և գիտություն: Տեղի ունեցած ընդունելության մասին Տեղկոմին պիտի հայտնվի վաղ ուշ քան ընդունման ժամանակից 2 որ հետո: Ընդունված ամեն մի բանվորի կամ ծառայողի վերաբերյալ Տեղկոմին իրավունք և վերապահվում ներկայացնելու պատճառաբանված բացարք:

§ 10.

Բանվոր-ծառայողները ընդունվում են ժամանակավոր կամ մշտական պաշտոնների: Ժամանակավոր աշխատավորներին ևս տրվում է հաշվեգրքույկ, վորում ճիշտ կերպով նշվում է ժամանակավոր պաշտոնը, վորը 2 ամսից ավելի չպետք է լինի: Ժամանակավոր աշխատանքի բնույթի մասին նախազգուշացվածները և աշխատ. որենդրքի 38 հոդվածով նախատեսված փորձաության ժամանակամիջոցից

ավել աշխատողները համարվում են մշտական աշխատանքի ընդունվածներ: Ժամանակավոր աշխատողները վորոնք հեռացվում են նախ քան պայմանավորված ժամկետի լրանալը, վճարվում են աշխատանքի հրավիրված ամբողջ ժամանակամիջոցի համար: Պայմանավորված ժամկետից ավել աշխատողները, ոգտվում են մշտական աշխատանքի մեջ գտնվող բանվորների կամ ծառայողների իրավունքով:

§ 11.

Շտատների կրճատման և աշխատակիցներին պաշտոնից հեռացնելու մասին սահմանվում է՝

ա) հիմնարկի լուծարքի կամ հատիքների կրճատման հարցը վորոշում է հիմնարկի վարչությունը Արհմիության մասնակցությամբ:

Մասսայական կրճատումների կամ լիկվիդացյայի ժամանակ Միությունը նախազգուշացնում է մեկ ամիս առաջ։

բ) Հաստիքների կրճատումը վոչ մի դեպքում չպետք է պատճառ դառնա արտաժամյա աշխատանքների, նույնպես ժամանակավոր աշխատակիցների հրավիրման կամ միանվագ վճարումով աշխատանքների։

գ) Համաձայն Աշխատենդրքի № 47 հոդվածի ա, բ. կետերի հեռացվողների անհատական ցուցակը կազմում է ադմինիստրացիան և հայտնում է Գործարկոմին ու հեռացվողին վոչ ուշ քան յերեք որ առաջ, մինչև հեռացնելը Գործարկոմի կողմից հեռացման վերաբերյալ բողոք բարձրացնելու դեպքում, հեռացումը դադարեցնվում է և մինչև կոնֆլիկտի լուծումը աշխատակիցը մնում է յուր պաշտոնում։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ՝ Բողոքը պետք է տրվի վոչ ուշ քան յերեք որվա ընթացքում Գործարկոմին հեռացվողին հայտնված ժամանակից սկսած։

դ) Հաստիքի կրճատման ժամանակ հավասար վորակի պատկանող աշխատակիցների առաջին հերթին, հեռացվում են վոչ Միության անդամները։

յե) Հաստիքի կրճատման ժամանակ ընտանիքի միակ կերակրող հանդիսացողը և միայնակ կանայք ոգտվում են պաշտոնում մնալու առավելությունից. հղի կանանց հեռացումը կարող է տեղի ունենալ Աշխատանքի տեսչի թույլատվությամբ։

զ) Աշխատանքի օրենդրքի 47-րդ հոդվածի ա, բ, գ,-ը հեռացվածին տրվում է արձակման նպաստ նրա յերկու չարաթվա աշխատավարձի չափով,

անկախ նրանից նա նախապատրաստված է թե վոչ։

ե) Հեռացվողների չխատավարձը պիտի վճարվի հիմնարկի Վարչության կողմից անմիջապես, յեթե վճարումը ուշացվում է վոչ հեռացվողի մեղքով, վերջինիս շարունակում է սանձել աշխատավարձ, մինչև փաստական վճարման օրը։

§ 12.

Ժամանակավոր աշխատունակությունը կորցնելու հետևանքով, հեռացումը կարող է տեղի ունենալ յեթե այդպիսին տևում է չորս ամսից ավելի։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1. Սույն կետը չի տարածվում հղի կանանց վրա, վորոնք ծննդաբերության պատճառով ազատվում են աշխատանքից։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ բ) Ժամանակավորապես աշխատունակությունը կորցնելու հետևանքով աշխատողների փոխարինողները համարվում են ժամանակավոր աշխատողներ։

§ 13.

Միության Վարչության անդամները, գործարկոմի անդամները, պրոֆլիգորները Գ. Կ. Հ-ի անդամները չեն կարող աշխատանքից հեռացվելու առանց միության համաձայնության։ Ընդունման և հեռացման վերաբերյալ կետերի խախտման համար, պատասխանատու յե հիմնարկության պետը։

ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ ՅԵՎ ՆՐԱ ՎՃԱՐՄԱՆ ՅԵՎ ՆՈՐՄԱՆԵՐԻ ԿԱՐԳԸ

§ 14.

Առաջին կարգի վարձը բանվորների համար վորոշվում է 37 ռ., ադմի-

Ներառյալ տեխնիկական պերսոնալի համար 108 ռ., իսկ աշակերտների համար 21 ռ. գործարանային և դրասենյակային ծառայողների համար 48 ռ., մյուս կարգերի համար վորոշվում և ըստ կարգերի միջին հարաբերությամբ, համաձայն հիշյալ տարբերության ցանցի, վորը բաժանվում է չորս կարգի:

ԲԱՆ. ՑԱՆՑ 1-ԻՑ ՄԻՆՉԵՎ 8-Ը.

1. 1,0	4. 1,85	7. 2,70
2. 1,3	5. 2,10	8. 3
3. 1,6	6. 2.40	

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ 1-ԻՑ ՄԻՆՉԵՎ 6-Ը.

1. 1,1	3. 1,55	5. 2,20
2. 1,25	4. 1,85	6 2.50

ԱԴՄԻՆԻՍՏՐԱՏԻՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԵՐՍՈՆԱԼԻ ԿԱԳԸ 1-ԻՑ ՄԻՆՉԵՎ 13

1. 1,0	4. 1,3	7. 1,65	10. 2,10
2. 1,1	5. 1,4	8. 1,80	11. 2,25
3. 1,2	6. 1,5	9. 1,95	12. 2,50
			13. 3,20

ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ ՅԵՎ ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿԱԳԸ 1—13

1. 1,0	4. 1,60	7. 2,40	10. 3,40	
2. 1,25	5. 1,85	8. 2,65	11. 3,85	
3. 1,40	6. 2,10	9. 2,95	12. 4,60	
			13. 5,3	

Աշխատավարձի վարձատրման ձևը բանվորների և աշակերտների համար սահմանել որավարձով, իսկ ծառայողների և տեխնիկական ադմինիստրատիվ պերսոնալի համար, ամսավճարով որավարձը սահմանել յելնելով ամսավճարի $^1/_{24}$-ական չափի գումարով:

ՈՐԱՎՃԱՐ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ.

1. Կարգ 1—52	3. Կարգ 2—47
2. Կարգ 2—54	4. Կարգ 2—85

5. Կարգ 3—24 7. Կարգ 4—16
6. Կարգ 3—70 8. Կարգ 4—62

ՈՐԱՎՃԱՐ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ.

1. Կարգ —91 4. Կարգ 1—70
2. Կարգ 1—15 5. Կարգ 1—92
3. Կարգ 1—42 6. Կարգ 2—19

§ 15.

Աշխատավարձի բաշխումը կատարվում է ամսական յերկու անգամ. առաջին կիսամսյակին—16-ին, յերկրորդ կիսամսյակի համար վոչ ուշ քան հաջորդ ամսվա 3-ը: Աշխատավարձը բաշխվում է աշխատանքի ժամերին:

§ 16.

Միջին աշխատավարձը սահմանել՝ վերջին յերկու ամիսների փաստորեն ստացած աշխատավարձի միջին չափով:

§ 17.

Աշխատավարձի դրույքի սիստեմը ամսականով թույլատրվում է միայն այն աշխատանքների վերաբերյալ, վորոնց հնարավորություն չկա վերահսկել կատարով աշխատելու: Մյուս բոլոր աշխատանքների համար աշխատավարձի դրույքը վորոշվում է հատավարձով: Աշխատավարձի հավելումը վերջին դեպքում անսահման է:

§ 18.

Բանվորների կամ ծառայողների բարձր կարգերի տեղափոխումն ստորինը, կարող է կատարվել հետևյալ դեպքում՝

ա) Այն դեպքում, յեթե բարձր կարգի համար չկա համապատասխան աշխատանքի աշխատավայրը չի համապատասխանում իր աշխատանքին.

Ա. ՄԵԼՔՈՆՅԱՆԻ
Երևան
Публичная библиотека
1006 4777
7990

բ) այն բանվոր-ծառայողները, որոնք չեն համաձայնվում սույն կետում նախատեսված դեպքում ցածր աշխատանք կատարելու, ազատվում են պաշտոնից ստանալով յելքի նպաստ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Ցածր կարգի փոխադրը վածը ստանում է 15 որվա աշխատավարձը հին չափով:

§ 19.

Արհմիութենական կոոպերատիվ խորհրդային կազմակերպություններում առաջ քաշման կարգով աշխատողներին իրավունք է վերապահվում վերադառնալ նախկին պաշտոնին կամ ընդունվել համապատասխան պաշտոնում:

§ 20

Նրբ մշակված նորմաները և հատավճառների դները պայմանագրի տեվողության ամբողջ ժամանակամի-

ջոցում մնում են հաստատուն. նրանց վերաքննումը ժամանակից առաջ կարող են կատարվել միայն այն դեպքում, յեթե տեղի յեն ունեցել տեխնիկական որևե փոփոխություն, որոնք անդրադառնում են աշխատանքի արտադրողականության վրա. հատավճարների դները կցվում են սույն պայմանագրին:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Յուրաքանչյուր նորմաների և գնահատումների վերանայման մասին, վարչությունը պարտավոր է աշխատողին հայտնելու յերկու շաբաթ առաջ.

§ 21

Յեթե հատավճարով աշխատողը Վարչության չնորհիվ որևե ժամանակ մնում է անգործ, աշխատողը ստանում է աշխատավարձ բոլոր անգործ մնացած ժամերի համար միջին աշխատավարձի չափով:

§ 22

Բանվորները պարտավորվում են տալ պայմանագրով նախատեսված արտադրական չափի և վորակի գործված քներ, յեթե արտելը կամ բանվորը բաց և թողնում գործված քն անբավարար վորակի, նույն գործվածքը վերադարձվում է և բանվորը կամ արտելը պարտավոր են նորից վերամշակել առանց լրացուցիչ վարձատրության, առանց հարգելի պատճառի գործվածքի վորակը անբավորար յեղած դեպքում բանվորի վարմունքը կարող է առիթ դառնալ նրան հանձնելու աշխատանք ավելի ցածր կարգով:

§ 23

Յեթե կաշիները բռակ են դուրս գալիս նյութերի վատ վորակի պատճառով և փչացումը կատարվում է բանվորից անկախ պատճառով, փչացված գործվածքը վարձատրվում է նախատեսված հատավճարով կամ բանվորի նախորդ ամսվա միջին աշխատավարձի չափով:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Այն դեպքերում յեթե փչացումը կատարվում է բանվորի անփույթ և այլ վերաբերմունքի հետևանքով փչացված գործվածքը չի վարձատրվում և ոսոիկից պակասվում է փչացած գործվածքի ամբողջ արժեքը, բայց այնպես, վոր բանվորը կարողանա ստանալ իր աշխատավարձի 2/3-ական մասը փչացնելու պատճառը վորոշում է Գ. Կ. Հ-ն:

§ 24

Արտադրական խորհրդակցությունում բանվորների կողմից արած առաջարկներում նրանց կատարած փոփոխությունների հետևանքով վորպիսին կիրառելով կյանքում տալիս են մնտեսում: Վարչությունը պարտավոր

է այդ բանվորին կամ առանձին խմբերին տալու միանվագ պրեմյա, վորի չափը վորոշում է եկսպերտ հանձնաժողովը։

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

§ 25

Հինգ և կես ամիս աշխատողին տրվում է արձակուրդ որացույցային տարվա մեջ մեկ անգամ։ Կրային բարբանի, սև մասերում, բրդի վրա աշխատողներին, հում նյութի պահեստի, փականագործների, կաչեգարի, ջրաղացպանի, հյուսների և նման աշխատող բանվորներին տրվում է մեկ ամիս արձակուրդ, իսկ գործարաններում մյուս աշխատողներին նաև գրասենյակի մեքենագրուհուն, ցրիչին և եքսպեդիտորին 3 շաբաթվա արձակուրդ, իսկ

բաղաքի գրասենյակային աշխատողներին 15 որ։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Արձակուրդների ժամանակաշրջանը սահմանվում է սկսած Ապրիլի մեկից մինչև նոյեմբերի մեկը։

§ 26

Կաշվարդի Վարչությունը պարտավորվում է բանվորներին և ծառայողներին տալ արտ-հագուստ համաձայն Աշխատողկոմատի՝ մշակած նորմաների, վորի ցուցակը փակցվում է պայմանագրին։ Արտհագուստն անպայման տրվում է բնականով։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Արտհագուստի լվանալը և նորոգելը կատարվում է ի հաշիվ հիմնարկության։

§ 27

Բանվորներին և ծառայողներին աշխատանքի ժամերի ընթացքում պետք

ե տրվի կես ժամ սնվելու համար, վորը չի մտնում աշխատանքի ժամերի մեջ. հիմնարկի Վարչությունը պարտավոր է հիմնարկություններում ունենալ— լվացարան և սրբիչներ տեղերում: Գործարաններում աշխատող բոլոր բանվորներին տրվում է ամսական 2-ական ֆունտ ոճառ, յերեսսրբիչ յուրաքանչյուրին մեկ հատ վեց ամսվա համար և գործարաններում պահել յեռացրած ջուր թեյի համար և թեյ ըստ կարիքի:

§ 28

Կաշվարդը պարտավորվում է հատկացնել փոխադրական միջոցներ, բանվորներին և ծառայողներին գործարաններ տանել ու բերելու համար:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Գործարաններում աշխատող ամեն մի բանվորի և ծառայողի տրվում

է յերկու զույգ կոշիկ հեռավորության պատճառով և այն բանվորներին, վորոնք ապրում են գործարաններում կամ ոգտվում են փոխադրական միջոցներից կրկվում են կոշիկ ստանալուց: Սահմանը վորոշվում է Մոլոկանովի փողոցից:

§ 29

Այնտեղ, վորտեղ բաղնիք չկա, Վարչությունը պարտավոր է տալ ամեն մեկին յերկու բաղնիքի տոմս ամսական.

§ 30

Կաշվարդի Վարչությունը պարտավոր է 28–29 տարվա կոնտրոլ թվերում նախատեսված աշխատանքի պաշտպանության վերաբերյալ գումարները ծախսել լրիվ ներքո հիշյալ աշխատանքների վրա:

ա) Կառուցել բաղնիք, վորը պետք է ունենա չոր հանելու, հագնելու տան-

ձին սենակները, նույնպես հարմարություններ չորեր չորացնելու համար:

բ) Կառուցել շենք ճաշարանի համար:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Ա և Բ կետերում նախատեսված շենքերը պետք է ավարտվեն մինչև 1929 թ. հոկտեմբերի 1-ը:

գ) Գործարանի բոլոր մասերում Վարչությունը պարտավոր է մինչև 1929 թ. հունիսի 1-ը անց կացնել վենտիլացիա (ինչպես են՝ կրային, բարբանի, սև մասում, հում նյութի պահեստում և այլն:

դ) Վարչությունը պարտավորվում է ունենալ ցեմենտի չաներ (տաշտեր) վորտեղ պետք է տեղավորել արտադրության մնացորդները, վորոնք կարող են ոգտագործվել ուրիշ տեսակի արտադրությունների համար:

յե) Դժբախտ դեպքերի դեմ պայ-

քարելու նպատակով, Վարչությունը պարտավորվում է բոլոր մեքենաների և արտանամիների ռեմենների վրա անց կացնել ցերկարության ցանցեր:

զ) Սանիտարական և տեխնիկական անվտանգության համար բաց թողնված գումարները ծախսել մինչև 29 թ. հոկտեմբերի 1-ը համաձայն Աշխ-ժողկոմատի կողմից մշակված կանոնների:

§ 31

Վարչությունը պարտավոր է բնակ. շինարարության համար ստացված գումարները ծախսել իր ժամանակին և կառուցել բանվորական բնակարան և վարտել 1929 թ. դեկտեմբերին:

§ 32

Գործարաններում Վարչությունը պարտավոր է ունենալ չտաշ ոգնու-

թյան դեղատուն, ցույց տալու առաջին բժշկական ոգնություն, և ունենալու իր դեղորայքը։

ԱՇԱԿԵՐՏՈՒԹՅՈՒՆ

§ 33

Կաշվարդի Վարչությունը պարտավորվում է պահելու իր գործարաններում աշխատելու մինչև 18 տարեկան անչափահասներ յերկու սեռից, վորպես աշակերտներ. անչափահասները 16–ից 18 տարեկան աշխատում են որական 6 ժամ և ստանում են աշխատավարձ ըստ տարիքի դրույքի լրիվ, հաշվելով նրանց բանվորական որը 6 ժամով։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. ա) Աշակերտների թիվը պետք է լինի վոչ պակաս ընդհանուր բանվոր ծառայողների յերեք տոկոսից։

բ) Աշակերտության ուսուցման տեվողությունը սահմանվում է յերեք տարի ըստ վորում, աշակերտը պետք է ոգտագործվի իրեն համապատասխանավոր հանձնարարված պարտականությունների շրջանում։

գ) Աշակերտների վարակը վորոշվում է վոչ ուշ քան 6 ամիսը մեկ անգամ հիգիենարկի վարչության, Արհմիության, գործարկոմի, ԼԿԵՄ-ի ներկայացուցիչներից բաղկացած հանձնաժողովների կողմից։

դ) Ընդունվող անչափահաս աշակերտները չպետք է պակաս լինեն 16 տարեկանից։

յե) Վտանգավոր ցեխերում կարելի յե ընդունել նույնպես 18–20 տարեկան աշակերտներ միության նախնական համաձայնությամբ։

զ) Հիգիենարկը պարտավոր է հսկակը անցած աշակերտներին վորոնք անցել են յերեք տարվա փորձնական ծրագիրը, հանել բրոնյայի կազմից, տալ նրանց համապատասխան աշխատանք և նրանց տեղը վերցնել նորերին։

§ 34

Վտանգավոր ցեխերում աշխատող

Կաշվարդը գործարկմանները և գրասենյակի պրոֆիլիազորներին պահպանման համար տալիս է բանվոր-ծառայողների աշխատավարձի ընդհանուր գումարի մեկ և կես տոկոսը. հասանելիահասներին, բացի իրենց մեկ ամսվա արձակուրդից տրվում է 15 որվա լրացուցիչ արձակուրդ:

ՄԻՈՒԹ. ԿՈՒԼՏ-ԿՐԹԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Նելիք գումարը տրվում է գործարկմանին, արհլիազորին աշխատավարձը վճարելուց անմիջապես հետո:

§ 35

Կաշվարդը պարտավորվում է ամեն ամիս աշխատավարձը վճարելուց հատկացնել կուլտ-կրթական աշխատանքներ տանելու համար գործարկմանին և արհլիազորին ընդհանուր աշխատավարձի մեկ տոկոս գումարի չափով:

§ 36

Վարչությունը պարտավոր է հատկացնել գործարկմանին առանձին գրասենյակ լրիվ կահավորված բոլոր հարմարություններով:

Գործարանի Վարչությունը պարտավոր է իր հաշվին տպագրել պայմանագիրը, բոլոր բանվոր-ծառայողներին բաժանելու համար:

Կաշեգործների Արհմիության Կենտ. Վարչության նախագահ՝

Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Կաշվարդի Տնօրեն՝ Կառավարիչ
Բ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԿԱՇՎԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՇԽԱՏՈՂ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՄԱՍՆԱՃԳԵՍՏՆԵՐԻ 1929 Թ. ՆՈՐՄԱՆԵՐԸ

1. ՀՈՒՄ ՆՅՈՒԹԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔՈՒՄ

1. Զոր կաշիներ մշակող բանվորներ.

ա) Կոշիկ կարճավիզ — 1 տարի
բ) Խալաթ քաթանից — 1 »
գ) Կաշվի ձեռնոցներ — ըստ կարիքի
դ) Անթեվ տաք հագուստ — 1 ձմեռ
յե) Գլխարկ — 9 ամիս

2. Աղ ասողներ

ա) Կոշիկ յերկարավիզ — 1 տարի
բ) Անթեվ տաքհագուստ — 1 ձմեռ
գ) Բլուզ շալվար — 5 ամիս
դ) Ֆարտուկ բրեզենտից — 9 »

յե) Ձեռնոց կաշվի — ըստ կարիքի
զ) Գլխարկ — 9 ամիս

3. Կաշիներ տեսակավորող

ա) Կոշիկ յերկարավիզ — 1 տարի
բ) Անթեվ տաք հագուստ — 1 ձմեռ
գ) Բլուզ շալվար — 5 ամիս
դ) Ֆարտուկ բրեզենտից — 9 ամիս
յե) Ձեռնոց կաշվից — ըստ կարիքի
զ) Գլխարկ — 9 ամիս

4. Խուզողներ.

ա) Կոշիկ կարճավիզ — 1 տարի
բ) Անթեվ տաք հագուստ — 1 ձմեռ
գ) Բլուզ շալվար — 4 ամիս
դ) Ֆարտուկ բրեզենտից — 9 ամիս
յե) Ձեռնոց կաշվից — ըստ կարիքի
զ) Գլխարկ — 9 ամիս

5. Բուրդ տեսակավորող.

ա) Բլուզ շալվար — 8 ամիս

բ) Գլխարկ տղամարդկանց — 9 ամիս
գ) Թաշկինակ կանանց — 9 ամիս

6. Հում նյութ կրողներ.

ա) Կոշիկ յերկարավիզ — 1 տարի
բ) Անթև տաք հագուստ — 1 ձմեռ
գ) Բլուզ շալվար — 5 ամիս
դ) Ֆարտուկ բրեզենտից — 9 ամիս
յե) Ձեռնոց կաշվից — ըստ կարիքի
զ) Գլխարկ — 9 ամիս

II. ԹՐՋԵԼՈՒ ԲԱԺԱՆՄՈՒՔ

7. Լվացողներ և ջարդողներ.

ա) Կոշիկ յերկարավիզ — 6 ամիս
բ) Բլուզ շալվար — 6 ամիս
գ) Ֆարտուկ — 6 ամիս
դ) Ձեռնոց ռեզինի — ըստ կարիքի

III. ՓԱՓԿԱՑՆԵԼՈՒ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

8. Փափկացնողներ.

ա) Կոշիկ յերկարավիզ — 9 ամիս

բ) Բլուզ շալվար — 6 ամիս
գ) Ֆարտուկ կաշվի — 9 ամիս

9. Մգողներ.

ա) Կոշիկ յերկարավիզ — 9 ամիս
բ) Բլուզ շալվար — 6 ամիս
գ) Ֆարտուկ կաշվի — 9 ամիս

IV. ԿՐԱՅԻՆ ՄԱՍ.

10. Կրողներ.

ա) Կոշիկ յերկարավիզ — 5 ամիս
բ) Ֆարտուկ կաշվի — 9 ամիս
գ) Բլուզ շալվար — 6 ամիս
դ) Ձեռնոց ռեզինի — ըստ կարիքի

11. Բարաբանի վրա աշխատողներ, նատր քսողներ և գլուխ գցողներ.

ա) Յերկարավիզ կոշիկ — 5 ամիս
բ) » » — (նատր քսողներին ըստ կարիքի)

գ) Ֆարտուկ կաշվի — 9 ամիս
դ) Բլուզ շալվար — 6 ամիս
յե) Ձեռնոց ռեզինի — ըստ կարիքի

12. Լեշ առնողներ ձեռքով.

ա) Կոշիկ յերկարավիզ — 6 ամիս
բ) Ֆարտուկ կաշվի — 6 ամիս
գ) Բլուզ շալվար — 6 ամիս
դ) Ձեռնոց ռեզինի — ըստ կարիքի

13. Լեշ առնողներ մեքենայով

ա) Կոշիկ յերկարավիզ — 9 ամիս
բ) Բլուզ շալվար — 6 ամիս
գ) Ֆարտուկ կաշվի — 9 ամիս

Վ. ԱՂԱՂՄԱՆ ՄԱՍԸ.

14. Բարաբանի վրա աշխատողներ. խրոմի մեծ վանինայի ձևով.

ա) Կոշիկ յերկարավիզ — 9 ամիս
բ) Ֆարտուկ կաշվի — 9 ամիս
գ) Բլուզ շալվար — 6 ամիս

15. Բարաբանի վրա աշխատողներ. խրոմի 2 վանինայի ձևով.

ա) Կոշիկ յերկարավիզ — 9 ամիս
բ) Ֆարտուկ կաշվի — 9 ամիս
գ) Բլուզ շալվար — 6 ամիս
դ) Ռասպիրատոր ռեզինի ձեռնոցներ — ըստ կարիքի

16. Պեկիլ տվողներ.

ա) Կոշիկ յերկարավիզ — 9 ամիս
բ) Ֆարտուկ կաշվի — 9 ամիս
գ) Բլուզ շալվար — 6 ամիս
դ) Ձեռնոցներ — ըստ կարիքի

17. Թաղողներ.

ա) Կոշիկ յերկարավիզ — 9 ամիս
բ) Ֆարտուկ կաշվի — 9 ամիս
գ) Բլուզ շալվար — 6 ամիս
դ) Ռասպիրատոր — ըստ կարիքի

18. Մզողներ.

ա) Կոշիկ յերկարավիզ — 9 ամիս

բ) Ֆարտուկ կաշվի — 9 ամիս
գ) Բլուզ շալվար — 6 ամիս

VI. ՆԵՐԿԵԼՈՒ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ.

19. Բարաբանով ներկողներ.

ա) Կոշիկ յերկաբավիզ — 9 ամիս
բ) Ֆարտուկ կաշվի — 9 ամիս
գ) Բլուզ շալվար — 6 ամիս

20. Խոզանակով ներկողներ և գլյանց քսողները.

ա) Կոշիկ կարճավիզ — 1 տարի
բ) Բլուզ շալվար — 9 ամիս
գ) Ֆարտուկ կաշվի — 9 ամիս

21. Շպրից ապպարատով ներկողներ.

ա) Կոշիկ կարճավիզ — 1 տարի
բ) Բլուզ շալվար — 9 ամիս
գ) Ֆարտուկ կաշվի — 9 ամիս

VII. ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ.

22. Պուշիկկայի և բլաժիրովկայի վրա աշխատողներ.

ա) Կոշիկ կարճավիզ — 1 տարի
բ) Բլուզ շալվար — 9 ամիս
գ) Ռասպիրատոր — ըստ կարիքի
դ) Ակնոցներ — ըստ կարիքի
յ) Զոքնոցներ — ըստ կարիքի

23. Կոդեր կտրողներ և ֆալցովկայի վրա աշխատողներ.

ա) Կոշիկ կարճավիզ — 1 տարի
բ) Բլուզ շալվար — 9 ամիս
գ) Զոքնոցներ — ըստ կարիքի

24. Տեսակավորողներ.

ա) Կոշիկ կարճավիզ — 1 տարի
բ) Բլուզ շալվար — 9 ամիս
գ) Ակնոցներ — ըստ կարիքի
դ) Ռասպիրատոր — ըստ կարիքի

25· Նակատչիկներ·

ա) Կոշիկ կարճավիզ — 1 տարի
բ) Բլուզ շալվար — 9 ամիս
գ) Ակնոցներ — ըստ կարիքի
դ) Ռասպիրատոր — ըստ կարիքի

26· Յուղողներ·

ա) Կոշիկ կարճավիզ — 1 տարի
բ) Բլուզ շալվար — 6 ամիս
գ) Ֆարտուկ բրեզենտից — 6 ամիս

27· Սրողներ և նարեզչիկներ·

ա) Կոշիկ կարճավիզ — 1 տարի
բ) Բլուզ շալվար — 9 ամիս

28· Զափողներ·

ա) Կոշիկ կարճ. — 1 տ.
բ) Խալաթ — 9 ամիս

29· Խոնավացնողներ, փափկացնողներ և հարթողներ·

ա) Կոշիկ կարճավիզ — 1 տարի

բ) Բլուզ շալվար — 9 ամիս
գ) Կանանց խալաթ — 9 ամիս

30· Պլատիրովշչիկներ·

ա) Կոշիկ կարճավիզ — 1 տարի
բ) Բլուզ շալվար — 9 ամիս
գ) Կաշվի գոգնոց — 6 ամիս

31· Ֆալցով աշխատողներ·

ա) Ցերկարավիզ կոշիկ — 1 տարի
բ) Բլուզ շալվար — 9 ամիս
գ) Կաշվի գոգնոց — 6 ամիս

VIII· ՈՃԱՆԴԱԿ ՄԱՍԵՐ·

32· Կեղեվ աղողներ·

ա) Բլուզ շալվար — 9 ամիս
բ) Կոշիկ կարճավիզ — 1 տարի
գ) Ակնոց և ռասպիրատոր — ըստ կարիքի

33· Սոկ Պատրաստողներ·

ա) Կոշիկ յերկարավիզ — 1 տարի

բ) Ֆարտուկ կաշվի — 9 ամիս
գ) Բլուզ շալվար — 9 ամիս

34· Խրոմի եկստրատ պատրաստողներ.

ա) Բլուզ շալվար — 9 ամիս
բ) Կոշիկ յերկարավիզ — 1 տարի
գ) Ֆարտուկ կաշվի — 9 ամիս
դ) Ռասպիրատոր, ակնոց և ձեռնոցներ — ըստ կարիքի

35· Կրային հեղուկ պատրաստողներ.

ա) Բլուզ շալվար — 9 ամիս
բ) Կոշիկ յերկարավիզ — 1 տարի
գ) Ֆարտուկ կաշվի — 9 ամիս
դ) Ռասպիրատոր, ակնոց և ձեռնոց — ըստ կարիքի

36· Բուրդ, լեշ և դուբի մնացորդներ հավաքողներ.

ա) Կոշիկ յերկարավիզ — 1 տարի

բ) Բլուզ շալվար — 9 ամիս
գ) Ֆարտուկ բրեզենտից — 9 ամիս

IX· ԶՈՐԱՆՈՑ·

37· Զորացնողներ.

ա) Բլուզ շալվար — 9 ամիս
բ) Կոշիկ կարճավիզ — 1 տարի

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ՝ Բոլոր այն աշխատողների և մասնագետների նորմաները, վորոնք չեն նախատեսված սույն վորոշման, անցնում են համապատասխան արդյունաբերության ճյուղերի նորմաներով։

Կաշեգործների Միության Կենտ. Վարչության նախագահ՝
Հ· ԱԲՐԱՄՅԱՆ

Կաշվարդի Տեղական Հրաքարարիչ՝
ԿԱՌՈՅԱՆ

Հայ ԽՍՀ Գիտությունների Ակադեմիայի Գրադարան
Ա. ԹՈՄԱՆԻՉՅԱՆԻ անվան
Публичная Библиотека

ՀՀ Ազգային գրադարան
NL0198317